

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

950

Արիւնքներ

891.71 Ա

F-62

Ե -


891.71-93
P-62

ՎԻՏԱԵԻ

ԲԻՆՆԿԻ

ՔՈՒԽ. Գ.ԳԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄԻՈՐԻԿԱՆԵՐ



Ն Կ Ա Ր Ն Ե Ր
Մ. 364 Ս. Բ Ա Հ Մ Ա Ն Ի Ն Ո Վ Ն Ե Ր Ի

ՊԵՇԷՐԱՇ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

891.71-93

Բ-62

ար

5843



ՄԻՈՐԻԿՆԵՐ

I

Սոր առվակի հատակում ապրում եյին պատիկ, փրչոտ թրթուրներ,



Նրանց չորս կողմից շրջապատել եյին թշնամիներ—



ձկները,



շերեփուկները,



լողացող բզեզը
և ջրային ուրիշ սարսափելի կենդանիներ:
Թրթուրները թշնամիներից թագնվել եյին աղմի մեջ:



119 1007 32.595


Նրանք կերակրվում եյին ջրային փտած խոտերով և չեյին համարձակ-
վում հատակից բարձրանալ:

Սորքում շուրջ պղտոր եր ու ծանր:

Իսկ ջրից վեր, յեղերքում
Ինչքան լավ եր, ինչ սիրուն.
Ձինջ ու կապույտ յերկնքում
Գարնան արևն եր փայլում,
Ճպուռները գունդգուն
Խաղում եյին ու յերգում,
Ողում լողում վար ու վեր
Ամպի սիպտակ քուլաներ...

II

Այսպես անցավ հազար որ...
Ու առվակով ամեն որ



Հազար որ թրթուրները վխտում եյին տղմի մեջ, թագնվում թշնամի-
ներից, կերակրվում ջրային փառած խոտերով և վնչ մի անգամ արեգակի
յերեսը չեյին տեսել:

Հազար ու մեկերորդ որը մի զարմանալի բան պատահեց. թրթուրնե-
րը լողալով գուրս յեկան հատակից և նստեցին առ-
վակի ափերի յեղեգների վրա:

Աշնան զով իրիկուն եր:

Փայլուն արևի շողերը գունազարդել եյին կապ-
տագուն անտառը:

Թրթուրները յեղեգների վրա նստոտած՝ ազա-
հաբար ծծում եյին թարմ ողը:



Ձուրը հոսում եր, հոսում,
Թագուն խոսում, փափսում,
Իսկ յերբ ձմեռն եր գալիս,
Ձուրը ել ձեն չեր տալիս—
Պապանձվում եր ու սառչում,
Մերկ ափերին եր կպչում:
Բայց հենց գալիս եր գարուն
Յեվ որերը տաքանում,
Ձուրը յերգում եր կրկին
Իր հին յերգերը ուժգին...



Ծծեցին, ծծեցին, նրանց տափակ մարմիններն ուռան, փրվեցին, բա-
ռակ մորթիները տրարվեցին, Գուրը թափվեցին:

Իսկ յեղեգների վրայից վեր բարձրացան թեթև-թեթև միորիկներ:

Նրանք ուղղեցին իրենց քողի պես բարակ թևիկները, յերկարացրին յերեք թելիկներից բաղկացած պոչիկները և ողում պարել սկսեցին:

Ինչպես բուքի հանդիպած
Փափուկ ձյունի փաթիլներ,
Այնպես եյին սլանում
Նրանք ողում վար ու վեր.
Ապա բռնում շուրջպարի
հատարներում ամպերի,
Հետո կարծես թե հոգնած
Թռչում եյին դեպի ցած,
Թևին տալիս ու կրկին
Հասնում սիպտակ ամպերին:




Ձկները դուրս ելին հանել ջրից իրենց լալիկ բերանները և կարծես մտածում ելին. «Մեզնից չեն ազատվի. ողում ուտելու բան չկա. կխաղան, կպարեն, կքաղցածանան, կիջնեն դեպի առվակը և մենք—հափ—կբռնենք նրանց»:

Իսկ միորիկները խաղում ելին ողում:

Նրանք չգիտեյին, թե ինչ է քաղցը, ուտել չգիտեյին, մինչև անգամ բերան ել չունեյին:


Յեղեգնի վրա նստած սարդը նկատեց միորիկներին և մտածեց. «Կպարեն, կհոգնեն ու կնստեն յեղեգների վրա հանգստանալու: Կփռեմ անտեսանելի ուռկանս և կորսամ բոլորին»:

Յերկու յեղեգների արանքում հինեց իր վոստայնը և սկսեց գործել:




Գործեց, գործեց, յեղեգների արանքը կտրեց բարակ, անտեսանելի վոստայնով:

Վոստայնի մեջտեղին ամրացրեց մի բարակ թել, թելի ծայրը փաթաթեց իր յետևի վոտին ու թագ կացավ:



Թագ կացավ տերևների յետևում և սպասում եր. յեթե կպչեյին վոստայնին, թելը նրա վոտը կքաշեր և իմաց կտար, թե վորսը բռնվել է:

Սպասում են ձկները, սպասում է սարդը:



Իսկ միորիկները՝

Խաղ են անում ու պարում
Պայծառ ողի ծալքերում,
Բռնում ուրախ շուրջպարի
Կատարներում ամպերի,
Ապա կարծես թե հոգնած

Սլանում են դեպի ցած,
Թևին տալիս ու կրկին
Հասնում սիպտակ ամպերին:
Ու չեն հոգնում քնքուշիկ
Թևիկները թափանցիկ:

Նրանց ամբողջ մարմինը (ցվել էր ողով ու դարձել թեթև, բմբուլից
եղ թեթև:

Թռավ յեկավ ու նստեց առվակի ափին շատակեր խաղտանիկ թռչունը:
Բան էր վորոնում, վոր քնելուց առաջ ուտի:

Վեր նայեց. «Ոհո, ինչ շատ են», մտածեց: Թևին տվավ ու սլացավ:
Շտապելուց նրա թևը կպավ սարդի վոստային:




Թևը քաշեց սարդի վոտը:

Սարդը վազեց դեպի թռչունը, ու ահից—չամփ—շուրն ընկավ:

Ձկները վախից թագնվեցին առվակում:

Խաղտանիկ թռչունը վերադարձավ, նստեց ափին և սկսեց կտցով մաք-
րել վոտները, վորոնց փաթաթվել էր սարդի կպչուն վոստայինը:




Ձկներն անցան առվակի խորը:
Սարդին շուրջ տարավ:
Ամենքը մոռացան միորիկներին:

III

Իսկ միորիկները, վոր
Խաղում էին ու պարում
Պայծառ ողի ծալքերում,
Բռնում ուրախ շուրջպարի

Կատարներում ամպերի,
Ապա կարծես թե հոգնած
Թռչում էին դեպի ցած,
Թևին տալիս ու կրկին
Հասնում սիպտակ ամպերին,




ցած իջան և սկսեցին փոքրիկ-փոքրիկ ձվեր ածել առվակի ջրի մեջ:
Արև մայր մտավ:

Ամբողջ գիշերը վորոնում էր բուբը:

Թեթև-թեթև ձյունի փաթիլները թափվում ու թափվում էին գետնի
վրա:

Ու յերբ կրկին արևը ծագեց, առվակի ափը սեփ-սիպտակ էր, և ձյու-
նի վրա ընկած էին մեռած միորիկները:

Միորիկները մեռան:



IV

Միորիկները մեռան:

Բայց դուրս կգան ձվերից
Պատիկ, փրշոտ թրթուրներ,
Վորոնք հազար որից հետ

Դուրս կթռչեն հատակից,
Միորիկներ կգառնան
Թեթև-թեթև ու սիրուն,
Վորոնք ուրախ կխաղան
Պայծառ ողի ծալքերում...

ԳԻՆԸ՝ 30 ԿՈՊ.



0905060

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍՆՈՒՄ ՀՍԽՀ ԼԺԿ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՄԲ № 31

Գիտերառ № 853

Գրառեպոստ № 1038 Բ.

« Կիրառ 4000

Վեճազրատուն Հայկոյիբրաֆի 2-րդ սպ. պատ. № 44

2013

2003



